# ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիական պետութիւնը բաժանուեցաւ եկեղեցուց։ Հռոմայ Պիոս X պապը դիմում է նոր շրջաբերականով ֆրանսիական եպիսկոպոսներին, եկեղեցականներին և ժողովրդին, որով մխիթարում է ֆրանսիական եկեղեցին իւր առաքելական խօսքով։ Ուրախութեամբ ողջունում է հոգևորականութեան և ժողովրդի սէրը և անձնուիրութիւնը դէպի եկեղեցին և այդ բանում տեսնում է ապագայ յաղթանակի գրաւականը։ Նա ջրում է իւր վերայ բարդած մեղադրանքը և բամբասանքը, իբր թէ կրօնական պատերազմ է ցանկանում. հերքում է և հակառակորդների զրպարտութիւնը, իբր թէ եկեղեցին ինքը հրաժարուել է իւր դոյքից։ Այն ինչ խլել են այն գոյքը բռնի։ Պետութիւնը պատրաստ է երկու չարիքների առաջ էր կանգնեցրել. կամ զրկուել եկեղեցու գոյքից, կամ կորցնել եկեղեցու անկախութիւնը։ Ինքը ընտրել է փոքրագոյն չարիքը։ Յունուարի 2-ի օրէնքը նա անուանում է յատիշատակութեան օրէնք, որով լրացուում է եկեղեցու զրաւումը։

Պաշտման դալով՝ Պապի կարծիքով օրէնքը մտցնում է անիշխանութիւն, անորոշութիւն և կամայականութիւն, թողնելով անյայտ, արդեօք տաճարները պիտի թողնուին հաւատացեալներին և որքա՞ն ժամանակ։ Իզուր հակառակորդները այս բոլորի պատասխանատուութիւնը Պապի վերայ են բարդում։

Այսպէս դատապարտելով «Նոր օրէնքը»՝ պապը ցոյց չի տալիս գործնական ցուցումներ, թէ ի՞նչպէս այսուհետև պիտի կազմակերպեն եկեղեցին ներկայ ծանր պայմաններում։ Այս ծանր խնդիրը նա թողնում է ֆրանսիական եպիսկոպոսներին։

Յունուար 15—19 La Mutte գեղեակում տեղի ունեցաւ եպիսկոպոսական ժողովը՝ խնամ գաղտնի։

Սկզբում կազմել են մի շնորհակալական ուղերձ Պապին այն շրջաբերականի համար, որով իրենց հայեցողութեան է թողնում ֆրանս. եկեղեցու կազմակերպութիւնը։ Յետոյ յայտնում իրենց կատարեալ անձնուիրութիւնը առաքելական աթոռին։ Նոյնպիսի ուղերձներ կազմել են և այն տասը եկեղեցիների եպիսկոպոսներին, որոնք առանձին թղթերով իրենց վիշտն ու քաջալերութիւնն են ցոյց տուել ֆրանսիական եկեղեցու պետերին։

Ապագայ կազմակերպութեան համար ընտրել են չորս մասնաժողովներ, որ պիտի մշակեն ծրագիրներ հետևեալ կետերի համար. 1) Ինչպէս կազմակերպել հրապարակային պաշտամունքը.

2) Կազմակերպել տնտեսական միջոցներ հայթայթելու եղանակը. 3) Հոգևոր դպրանոցներ բանալ. 4) Այլ և այլ հարցեր. եկեղեցական երգեցողություն, հոգևորականության ընակարան և ն։

Ֆրանսիական եկեղեցական ընդհարումները արձագանք են գտել Իտալիայում, ուր կազմակերպել են հակապապական ցույցեր և շնորհաւորական հեռագիրներ Կլեմանսոյին՝ «աղատության ջատագովին». Կատարել են և համակրական ցույցեր Ֆրանսիական դեսպանատան առաջ Հռոմում, Միլանում և այլուր։

---

Ռուսաց լեզուն կաթոլիկ եկեղեցում. Նոյեմբերի 29-ին հրատարակուեցաւ բարձրագոյն հրաման հաղորդելու կաթոլիկ հոգևորականներին Պապի ատենադպրի շրջաբերական թուղթը, որով վերացւում է այն արգելքը, որ Պիոս IX-րդ պապը դրել էր ռուս լեզուի վերայ 1877 թուին, կաթոլիկ եկեղեցում։ Պաշտօնական հաղորդագրութիւնը աւելացնում է, որ այն արգելքի վերացումը Ռուսաց կառավարության պահանջի հետևանք է և այդ արգելքը դաւանական բնաւորութիւն չունէր. որովհետև «լրացուցիչ առատաձեռնության» մէջ բոլոր ուրիշ լեզուները, բացի ռուսերէնից, ընդունուած էին Վատիկանի կողմից։ Յետոյ հաղորդագրության մէջ խօսուում է, որ այս նոր կարգադրությունը պիտի գոհացնէ բելոռուս և մալոռուս կաթոլիկ ժողովրդին, որոնք ցարդ զրկուած էին մայրենի լեզուով ժամասացությունից և որ առանձին նշանակություն է տալիս ինկատի առած այն ունիատների խմբերով կաթոլիկություն ընդունելը. որովհետև վերջինների համար ռուսաց լեզուն ոչ միայն մայրենի, այլ և միակ հասկանալի լեզուն է։

---

Կաթոլիկ եկեղեցին Գերմանիայում. Կաթոլիկ կանայք Գերմանիայում մի մեծ կազմակերպություն ունին «Կաթոլիկ կանանց միություն» անունով։ Նոյեմբերի սկզբներին այդ միությունը իւր երկրորդ ընդհանուր ժողովն է գումարել Մունխենում։ Կազմակերպությունը 30 ճիւղ ունի 11962 անդամով, որի հետ միության կապեր ունին 141 ընկերություն։ Կազմակերպության բերան թերթը հրատարակւում է 11000 օրինակ։ Տարեկան եկ ու մուտքը 18178 մարկ է։

Կաթոլիկ եկեղեցին Ամերիկայում. Կաթոլիկ եկեղեցին Ամերիկայում ամենամեծ և հարուստ եկեղեցիներից մէկն է: Նա մեծ կալուածներ ունի յատկապէս բազմամարդ քաղաքներում և աշխատում է իւր հաւատացեալներին զետեղել նոյն կալուածների վերայ և եկեղեցու շուրջը, որպէս զի ամբողջ թաղամասեր կազմէ նրանցից և ընտրութիւնների ժամանակ իւր ներկայացուցիչներն ունենայ կամ կաթոլիկ պաշտօնեաներ նշանակել տայ այդ մասերի կառավարութեան համար: Օրաթերթերի մեծագոյն մասը նոյնպէս կաթոլիկների ձեռքն է և եպիսկոպոսների կամ միւս պաշտօնեաների գործառնութեան և շարժումների մասին մանրամասն լուրեր են տալիս: Կաթոլիկութիւնը Ամերիկայում աճում է յատկապէս Եւրոպայի կաթոլիկ տարրերի՝ լեհացիների, իտալացիների, իրլանդացիների՝ գաղթականութեամբ: Կաթոլիկ եկեղեցու հարստութեան մասին գաղափար տալու համար բաւական է յիշել, որ Նիւեորքում 160 միլիոն մարկի կարողութիւն ունի և միայն 24 միլիոն պարտք: Հոգևորականութիւնը մեծ ջանք է գործ դնում եկեղեցու հարստութիւնը մեծացնելու, նոյն իսկ միջոցների մէջ խտրութիւն չդնելով: Պապականութեան ազդեցութիւնը Ամերիկայի կաթոլիկութեան վերայ համեմատաբար թոյլ է, և ժողովրդի մասնակցութիւնը եկեղեցական գործերի մէջ աւելի մեծ, քան Եւրոպայի կաթոլիկ երկրներում:

---

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Գերմանիայի Հաննովեր նահանգի մի խումբ պաստորներ միացել են և մի ընկերութիւն կազմել «Աւետարանական ապատութիւն» անունով: Ընկերութեան ծագման պատճառը ներկայ ժամանակի արտաքոյ կարգի լուրջ և մի և նոյն ժամանակ յուսալից պահանջներն են: Ժամանակի լրջութիւնը ծագում է աստուածաբանական գիտութեան և եկեղեցու հակադիր զարգացումից, որ նկատելի է վերջին տասնամեակում ոչ միայն Հաննովերի, այլ և Գերմանիայի միւս փոքր պետութիւնների եկեղեցիներում: Հաննովերը, թէև քաղաքանապէս Պրուսիայի մի նահանգն է այժմ, բայց եկեղեցու ներքին անկախութիւնը մնացել է թագաւորութեան անկումից յետոյ ևս: Մինչդեռ նորագոյն աստուածաբանութիւնը պատմական-քննական եղրակացութիւնները կամենում է քրիստոնէական կրօնի հասկացողութեան և հաւատի հիմք դարձնել, եկեղեցական վարչու-